

իւր ուշադրութիւնը դարձնում է ընտանիքի, ընտանեկան օջախի վերայ, որը կազմում է կենդան, որտեղից առաջ է դալիս այն ամենը, ինչ որ օժանդակում է բազդին և մարդկային յառաջադիմութեան: Քաղաքական բոլոր հարցերի վերայ մենք կը նայենք ընտանիքի և ընտանեկան երջանկութեան անոտակէտից:

Յետոյ մեր առաջին պարտքը կը լինի ուրախ, անյիշաչար և գուարթ ընաւորութիւն: Մեր պարտքը կը լինի բանալ մեր կարճ կեանքում եղած բոլոր բարեքները, մեր թերթը կը լինի լաւատես: „Daily Paper“ կը լինի խաղաղութեան օրդան: Մեր առաջին ցանկութիւնը կը լինի այն, որ խաղաղութիւնը տարածուի ընտանիքից բոլոր դասակարգերի և ազգերի վերայ:

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻԻՆԸ ԵՒ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ

(Նարուսակոբիւն).

Կռուի այսպիսի լուրջ պահանջմանց հետ հնչում է նաև կարեկցութեան և սիրոյ պարտաւորութեան քաղցր ձայնը: «Դամմապադամ»ի առակների մէջ ասուած է. «յաղթիր ըարկութեանը հեղութեամբ, չար գործին—բարութեամբ, ժլատութեանը—առատաձեռնութեամբ, խաբէբային—ճշմարտութեամբ...»: «Ո՛վ որ թշնամուն թշնամութեամբ և չարիք տարածողներին հեղութեամբ չի հատուցանել, ո՛վ ազահ չէ ազահների մէջ, այդպիսիներին կանուանեմ ես Բրահման».—... «թշնամութիւնը խաղաղանում է ոչ թէ թշնամութեամբ, այլ նա խաղաղում է թշնամութեան բացակայութեամբ. այս յաւիտենական օրէնք է»: Բուդդայականութիւնը կրում է և լի է հեղութեան և բարեգործութեան հոգով, որի հիման վերայ նա պահանջում է աղքատների և հիւանդների համար տներ, վանքեր, ծոյն իսկ կենդանիների համար հիւանդանոցներ կառուցանել, և

արգելում է սպանել նոյն իսկ ամենաչնչին կենդանի արարածի: Նա լի է համբերութեան հոգով, որ արգելում է կրօնը տարածելու համար արիւնահեղ հալածանքներ յարուցանել հերիտիկոսների դէմ, ընդհակառակը, նա իւրաքանչիւր կրօնի առաջարկում է լայն համբերութիւն: Նա լի է ժուժկալութեան, չափաւորութեան և հեղութեան համար կրթիչ ոյժով, մանաւանդ տանջանքների ժամանակ անյողդողդ մնալու և սիրալիր զոհուելու պատրաստակամութեան ոյժով: Բուդդայի հեղ վարդապետութիւնը իւր ազնուացուցիչ ազդեցութիւնն ունեցաւ ազգերի դաժանութիւնների և խստութիւնների վերայ, նա նոցա սովորեցրեց չափաւորութեան և ինքնազսպման և դարմանքի արժանի արդիւնք առաջ բերեց միջին Ասիայի թափառաշրջիկ ժողովրդների և Յէյլոնի ու Սիամի ցեղերի մէջ: Թէ ինչպիսի՞նք ինքնուրացութեան և բարութեան ընդունակ է դարձնում բուդդայականութիւնը իրեն հետևողներին, ցոյց է տալիս այն պատմութիւնը, որ պատահեց նոյն իսկ Բուդդայի մահից յետոյ: Արքայորդի Կունալայի (Kunāla) վերայ սիրահարուեց թագուհին իւր հօր կինը և նորանից մերժում է ստանում: Վրէժխնդրութեան ծարաւով լի թագուհին արքայորդուն ուղարկում է ամենահեռաւոր նահանգներից մէկը և հրամայում է աչքերը հանել: Երբ սղըող ու կոծող ժողովրդի ներկայութեամբ հանեցին մի աչքը, իշխանը վերցրեց այն և ասաց. «Ննչո՞ւ չես տեսնում, ո՞վ մսի կտոր, այն պատկերները, որոնք փոքր ինչ առաջ տեսնում էիր որքան խաբւում են և ինչպիսի նախատինքի արժանի են այն յիմարները, որոնք իրենց յոյսը քեզ վերայ դնելով ասում են. «այս ես եմ»: Երբ հանեցին նորա միւս աչքը, ասաց. «մարմնաւոր տեսողութիւնը, որ շատ դժուար է ձեռք բերել, խլուած է ինձանից, բայց ես ձեռք բերի իմաստութեան կատարելագոյն տեսողութիւնը: Իմ մէջ թագաւորը այլ ևս չի ճանաչիլ իւր որդուն, բայց ես դարձայ բարձրագոյն թագուհու—իմաստութեան որդի»: Նորան յայտնեցին որ այդ թագուհու կարգադրութիւնն էր: Բայց նա պատասխանեց. «Թող նա, ով այդ հրամանն արձակել է, բախտաւոր լինի, թող յղիանայ կեանքով և հարըստութեամբ, որովհետեւ նորա միջոցով ես բարձր բարիքը ճանաչեցի»: Դորանից յետոյ նա սկսում է թափառել իրրեւ մուրացկան և գալիս է իւր հօր քաղաքը, սկսում է նորա պալատի առաջ բարձր ձայնով երգել: Թագաւորը ճանաչում է Կունալային, կանչում է իւր մօտ և խայտառակ դորժը բացւում է: Թագաւորը կամենում է սպանել տալ իւր չար կնոջը, սակայն Կունալան բարեխօսում է նորա համար և ասում. «Թագաւոր»

ես ոչ մի ցաւ չեմ զգում, և չ'նայելով այն անգթութեան, որին ես ենթարկուեցի, այնուամենայնիւ իմ մէջ բարկութեան ոչ մի կայծ չէ գտնուում: Իմ սիրտս չի է բարեացակամութեամբ դէպի մայրս: Որ ասածս ճշմարիտ է, թող վերադառնայ իմ տեսողական ուժը որ ես առաջ ունէի», և խնդրեց իւր նախկին զեղեցիկութեամբ ստացաւ նա իւր տեսողութիւնը: Եւ եթէ մենք յիշենք վերջապէս այժմեան, ի հարկէ, այլասեռուած բուդդայականութեան և կաթոլիկ եկեղեցւոյ մէջ եղած զարմանալի նմանութիւնը, պատկերներն և մասունքներն ընդհանուր յարգանքը, գովասանքի արժանի գործերն և յաճախ կրկնուող աղօթքներն նմանութիւնը, սովորական վարդապոյն պսակը, որ շատ կարելի է յայտնի է դարձել Հնդկաստանում և ապա խաչակիրների արշաւանքների ժամանակ մահմետականների միջոցով Եւրոպա է մուծուել: Քաղաքակրթութիւնը իւր հանդէսներով, երգսացութեամբ և պատարագներով, գլխաւորապէս հիւսիսային բուդդայականութեան Գալայ—Լամա (Dalai—Lama) պապին, տոնդուրայով (մազերը կտրել) կրօնաւորների հաստատութիւնը, նոյնպէս և այն երեոյթը, որ բուդդայականութիւնը երկու ճիւղի բաժանուեց, հիւսիսում զարգանում է աւելի աւանդութիւնը, իսկ հարաւում պահպանուած է Բուդդայի հին ոգին, ինչպէս և քրիստոնէական եկեղեցին—կաթոլիկ և աւետարանական,—յետոյ յիշենք և այն որ հէնց սկզբից բուդդայականութիւնը ինքը հիմնուած է երեք կէտերի վերայ, որոնք գտնուում են աւանդական խոստովանութեան մէջ. «ես ապաւինում եմ Բուդդային, Վարդապետութեան և Ժողովին», ինչպէս որ քրիստոնէութեան մէջ. «հաւատամ ի Հայր, յՈրդի և ի Ս. Հոգի»,—այն ժամանակ շատ հեշտ է հասկանալ այն համակրանքը շատ քրիստոնեաների որ նոքա տաճում են դէպի այդ կրօնը: Այո, այժմ մեր առաջ ծագում է այսպիսի հարց, թէ աչքի առաջ ունենալով այդ նմանութիւնները, գուցէ քրիստոնէութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ նոյն բուդդայականութիւնը վիթխարած և կամ սորա ազդեցութեան տակ կազմակերպուած: Ինչպէս բացատրել նմանօրինակ զուգադիպութիւնները: Ահա այս հարցերին կաշխատենք պատասխանել:

Այժմ շատ է տարածուած այն տեսութիւնը, որ առաջ է եկել Սուբատրա Բիկշու—ի հաւատոյ հանգանակի և իւր ժամանակ մեծ ուշադրութիւն գրաւող Նիկողայոս Նոտովիչի «Ընդհատումն Յիսուս Քրիստոսի կեանքի մէջ» գրքի ազդեցութեան տակ, որ Յիսուս իւր 12 տարեկան հասակում եղել է Հնդկաստանում և

աշակերտել է բուդդայական մի կրօնաւորի և յետոյ վերադառնալով Պաղեստին սկսել է վրիժախնայեալ գաղափարը քարոզել: Բայց յետոյ նրա քարոզած վրիժախնայեալ գաղափարի վարդապետութիւնը նսեմացել է միանալով հրէական օրէնսդրքի սխալների հետ, ուստի և աւետարանի մէջ այդ վարդապետութիւնը այնքան աչքի չէ ընկնում: Այնուամենայնիւ թէ քրիստոնէական վարդապետութեան հիմքը և թէ Փրկչի յայտնութիւնը բուդդայական ծագմամբ են բացատրում: Նիկողայոս Նոտովիչը, որ հաստատում էր, թէ ինքը այդպիսի մի բան կարգացել է Տիբէտի վանքերից մէկում, հրապարակօրէն դատապարտուեց իբրև խաբէբայ և կեղծող ¹⁾ — և քանի որ գիտենք, որ Նոր Աւիստի վերաբերեալ գրուածքների, պարսկական գրքերի և նոյն իսկ այնպիսի գրուածքների մէջ, որոնք քրիստոնէութեան թշնամիներին ձեռքի տակից են դուրս եկել, ֆիստուսի Հնդկաստանում գտնուելու մասին ամենափոքրիկ ակնարկ անգամ չէ գտնուում, որ հիւսան և Մարիամի որդի ֆիստուսը Նաղարէթում առաջին անգամ երևալով իւր հայրենակիցներին մեծ զարմանք է պատճառում. «Ամենեքեան վկայէին նմա և զարմանային ընդ բանս շնորհացն, որ ելանէին ի բերանոյ նորա. և ասէին. ո՞չ աս է որդին Յովսէփայ» (Ղուկ. Գ. 22), յետոյ եթէ յիշենք այդ երկու կրօնների աչքի ընկնող տարբերութիւնները, քրիստոնէութեան սկզբնական ծագումն ու պարզութիւնը, առաքեալների վկայութեան անաշատութիւնը և ճշմարտախօսութիւնը, ի նրկատի ունենանք նաև որ Բուդդայի անունը, իբրև կրօնի հիմնադրի, յիշուած է առաջին անգամ Քրիստոսի ծննդից 220 տարի յետոյ քրիստոնէական եկեղեցու հայր Աղեմէս Աղէքսանդրացուց, և որ Բուդդան աստուած է ճանաչուել միայն իւր հետևողների «դէպի նա ունեցած յարգանքի շնորհիւ», ի մի հաւաքենք այն բոլոր տեղեկութիւնները, որոնք միանգամայն անկարելի են դարձնում քրիստոնէութեան բուդդայական կրօնի հետ ունեցած աւելցութիւնը, այն ժամանակ մենք գիտական աւելի մեծ հիմունքներով պէտք է ընդունենք և ցոյց տանք որ վերոյիշեալ երկու տեսութիւնները միանգամայն անհեթեթ են:

Այս խնդրին այլ կերպ է վերաբերւում, ի հարկէ, Ռուդոլֆ 2էյդէլը, որ գիտական աշխարհում մեծ իրաւանցում առաջ բերեց, որ լորձեւ հաստատուելու այն տեսութիւնը, թէ քրիստոնէութիւնը բուդդայական լեզունգաներից կախումն ունի, հետևապէս և Քրիստոսի վաղը կազմուել է Բուդդայի կեանքի

1) Робертъ Фальке „Будда, Магометъ, Христосъ“ Т. I. 113.

նմանողութեամբ: Զէյդէլը պնդում է, որ Մատթէոսի աւետարանի սկզբնական բնագիրը լինչպէս նաև Մարկոս աւետարանի նախնական օրինակը հիմնուած են մի երբորդ հնագոյն, բանաստեղծօրէն գրուած յայտնութեան աւետարանի վրայ, որը գրուած էր անյայտ անձի ձեռքով և որի մէջ Բուդդայի մանկութեան պատմութիւնը, նրա քարոյները, աշակերաններին տուած խրատները, և ապագայի համար արտայայտած դաշտախորհրդերը վերագրուած էր Յիսուսին: Այդ նախնական աւետարանի մէջ Յիսուսը գրուած էր Բուդդայի անդ, «բուն պատմութիւնը քրիստոնէական հոգով մշակելուց յետոյ»: Քրիստոնէութեան այս կեղծիքը բնութենցին բոլոր աւետարանիչները, նաև Յովհաննէսը «Երաքանչիւրը իւր հասկացողութեան համեմատ մշակելով սկզբնագիրը»: Յաւալի է, որ այս աղբիւրը կորած է: «Այդ աղբիւրը պէտք է կորստեան մասնուէր և գրելաւորապէս այն պատճառով, որ թէև նա շատ նիւթ է տուել աւետարանիչներին, բայց սորա էին, որ իրենց նոր գրքերով սկսեցին ծառայել իբրև ճշմարիտ բնագիր քրիստոնէական նախնական վարդապետութեան և մոռացութեան տուն սկզբնական յայտնութեան աւետարանը: Այնպէս պէտք է լուծուի այն հանելուկը, որը մինչև այսօր իբրև առանձնակի վերացական հասկացողութեամբ աւելի աղօթացած էր քան պարզուած»¹⁾:

Այդպէս է ասում Զէյդէլը: Սակայն այս մասնաճիւղի մէջ աշխատողների մեծամասնութեան հետ մենք ևս այդ աւետարանները իւր ներքին և արտաքին հիմունքներով համարում ենք բոլորովին սխալ: Ի հարկէ, քրիստոնէայ հեղինակները կողմից փոխառութիւնը հնարաւոր էր և այդ հէնց այն պատճառով, որ բուդդայական գրքերը մեծ մասամբ կազմուած են մինչև Քրիստոս: Բուդդայի աւետարանը՝ Տրիպիտակա (Tripitaka)²⁾, որ մեր աւետարանի անգն է բռնում իւր երեք մասերով՝ Վինայա-Պիտակամ³⁾, Զուտտա-Պիտակամ⁴⁾ և Աբիդարմա-Պիտակամ⁵⁾ գրուել է Գ, կամ Ե. դարում նախ քան Քրիստոս: Բնաբ-

1) Р. Зейдель. Цит. соч. стр. 304.

2) Այդպէս է կոչում ամենեւեմ յիշած տրիպիտակա երեւակ կոչովը:

3) Vinaya — Pitakam — Բուդդայական կարգի հնագոյն կանոնները:

4) Sutta — Pitakam — Վարդապետութիւն, փարոգներ և սուսնձին մտքեր, որոնք իշխ տեսն առաջին անգամ Բուդդայի մանկ յետոյ — Դհամմապադամ (Dhammapadam):

5) Abidharma — Pitakam — Վերջին ժամանակների բուդդայական բրնազանցութիւնը:

րայի (Bhabra—մի քանի օրուայ ճանապարհ հեռու Ջապուրայից—Dschapur) մօտ գտնուած քարի վերայ գրուած յայտնի արձանագրութեան հիման վերայ՝ բուդդայական Կոստանդինը—Ասոկայի (Asoka) թագաւորը, Գ. դարում ն. ք. Բ. ընտրեց այդ կանոնական գրքերը յայտարարելով իբրեւ միակ և իսկապէս գլխաւոր հեղինակութիւն ունեցող գրքեր, իսկ 80-ական թուականներում ն. ք. Բ. այդ հնագոյն Պալի-Կանոնը (Pāli-Kanon) հաստատուեց նաեւ Յէյլոնում: Բուդդայի մասին գոյութիւն ունէին նաեւ անթիւ կենսագրական լեզէնդաներ և եթէ նոյն իսկ Լալիտա-Վիստարա (Lalita-Vistara)¹⁾, — որը կարող էր քրիստոնեայ գրողների համար գլխաւոր աղբիւր ծառայել—կազմուել է գուցէ Քրիստոսի ծննդից 20 տարի յետոյ, բայց և այնպէս պատմութեան հիմնական միջուկը վերաբերում է այնքան հեռաւոր դարերի, որ ժամանակագրական յարաբերութիւնն աչքի առաջ ունենալով անհնարին է ընդունել, որ քրիստոնեաները բուդդայական գրականութիւնից օգտուած լինեն:

Մենք կամենում ենք քննութեան ենթարկել նաեւ Զէյդէլիցուցմունքը թէ Քրիստոսի ծննդեան ժամանակ Հնդկաստանի և Հռովմի, Անտիոքի և Աթէնքի մէջ ինչ տեսակ վաճառականական և արդիւնաբերական յարաբերութիւններ կային: Այն օրից, երբ Աղէքսանդր Մեծը տիրեց արեւելքին, սկսեց ազգերի մէջ շփումն առաջ գալ և մեզ յայտնի է, որ այդ ժամանակից բուդդայական միսիօնարները սկսեցին տարածել իրենց հաւատարմութեան, ընական է ընդունել, որ հեշտութեամբ և ուղիղ ճանապարհով կարող էր ազգերի կրօնական դադափարների մէջ մի տեսակ յոխադարձ ազդեցութիւն առաջ գալ: Անկասկած այս ձևով է կազմուել Պղատոնի և Պիլթագորասի հոգոյ տեղափոխութեան վարդապետութիւնը: Այնուամենայնիւ աւետարանի կախումն բուդդայականութիւնից մենք անկարելի ենք համարում: Իտալիայի և Հնդկաստանի մէջ առեւտրական յարաբերութիւններ կարող էին, ի հարկէ, տեղի ունենալ, սակայն եթէ աչքի առաջ ունենանք թէ հռովմայեցի գրողները որքան քիչ տեղեկութիւն ունէին հնդկական իրիւսոփայութիւնից և գրականութիւնից, այն ժամանակ կհասկանանք, թէ միթէ կարող էր որեւէ Պաղեստինի հասարակ գրող հնդկական աշխարհահայեցողութիւնը իւրացնել և մինչև անգամ քարոզել:

1) Սա բովանդակում է Բուդդայի մանկութեան պատմութիւնը հասցա հինգ աշակերտների դարձը և յորս ճշմարտութիւնների փառքը Բեմարկում:

եւ եթէ, ինչպէս Զէյդէլն է ենթադրում, գոյութիւն է ունեցել բանաստեղծական ոճով դրուած յայտնութեան աւետարան, հապա ո՛ր է կորել այդ հին աղբիւրը և ինչո՞ւ նորա մասին ոչ մի տեղ յիշատակութիւն չկայ: Մենք տեղեկութիւններ ունինք հին-Մարկոսի և հին-Մատթէոսի աւետարանների մասին, և մի՞թէ Յիսուսի մանկութեան պատմութեան այս հրնադոյն և կարևոր աղբիւրը կ'կորչէր առանց որևէ հետք թողնելու: Մենք գիտենք, որ Քրիստոսի մանկութեան պատմութիւնը նախ քան գրի առնելը կազմուել է դեռ ևս Յիսուսի ազդականների կենդանութեան ժամանակ՝ քրիստոնէայ ամենահին համայնքների մէջ: Կարելի՞ բան էր ուրեմն, սորա հետ խառնել հնդկական պատմութիւն և այդ բանը բողոք չյարուցանէր, քանի որ կենդանի էր Քրիստոսի Յակոբ եղբայրը (մինչև 69 թ.): Դորանից յետոյ մենք պիտի ուշադրութիւն դարձնենք վերև մեր յիշած զուգահեռական նմանութիւնների վերայ: Այստեղ չպիտի մոռանալ և առանձնապէս շեշտել այն հանգամանքը, որ բոլոր պատմութիւնները աւետարանների հետ համաձայնում են միմիայն երկրորդական կէտերում, իսկ ամենա-կարևոր դէպքերում միանգամայն տարբերութիւն են: Օրինակի համար վերցնենք Բուդդայի կորուստը և 12 տարեկան Յիսուսին տաճարի մէջ: Այս ամբողջ պատմութեան մէջ համաձայն են միմիայն երկուսի կորուստը և ծնողների գտնելը: Ընդհակառակը Զատիկի ժամանակ տաճարում 12 տարեկան Յիսուսի և հրէայ գիտնականների հետ պատահած դէպքը և նորա մանկական-միամիտ, բայց միեւնոյն ժամանակ մեծ խօսքը. «Ո՞չ գիտէիք, զի ի տան չօր իմոյ պարտ է ինձ լինել» (Ղուկ. Բ. 49) բոլորովին անհամեմատելի է:

Բուդդայականութիւնը և քրիստոնէութիւնը—ինչպէս յետոյ ևս ցոյց կը տրուի—երկու զուգահեռական կրօններ են և ունին այնքան մեծ տարբերութիւններ, որ վերոյիշեալ փոքրիկ նման կէտերը ոչ այլ ինչ են եթէ ոչ ջրի մի կաթիլ ծովի մէջ: Իսկ իրօք նման կէտերն էլ պէտք է բացատրել այն օրէնքով, որով համազօր պատճառները ունենում են միեւնոյն հետեանքները: Եթէ կրօնական-պատմական շրջաններում յաճախ երևան է դալիս զարմանալի նմանութիւն նոյն իսկ իրարից բոլորովին անջատուած ազգերի մէջ, այն ժամանակ ևս առուել հասկանալի պիտի լինի այդ զուգադիպութիւնը, այն վիճակի և հանգամանքների վերաբերմամբ, որոնց մէջ առաջ եկան Բուդդան և Յիսուս: Երկուսն էլ ծագել էին սրբազան կրօնից, երկուսն էլ նոր վարդապետութեան հիմք դրին, երկուսն էլ կոմենում

էին խորապէս արմատացնել կրօնը, նորան գիտակցական դարձնել և երկուսին էլ յատուկ էր փրկութեան գաղափարը: Միթէ հաշուի չախալ՝ առնել և այն, որ երկուսն էլ մեռնող կրօնների ներկայացուցիչներէց իբրեւ փրկիչ մեծարանքով ընդունուեցան, որ երկուսն էլ նախ քան մեծ դարձի սկսելը ներքին կռիւ մղեցին, որից ոչ մի մահկանացու մարդ ազատ չէ, որ նորա ծոմապահութեամբ անցկացրին օրերը առանձնութեան մէջ, ընտրեցին իրենց համար աշակերտներ, գործեցին հրաշքներ, և իրենց գաղափարները տարածեցին ժողովրդի մէջ առակների և կարճ ասացումների ձևով: Զանազան կրօններից բերուած բազմաթիւ օրինակների հիման վերայ կարելի է ապացուցանել, որ համանման դրութիւնից առաջ են գալիս և համանման գործողութիւններ. և միթէ այս չէր կարող պատահել քրիստոնէութեան և բողոքականութեան մէջ և զուգադիպութիւններ ունենալ:

Եթէ խորապէս բացարձակ վիպութիւն ունենայինք, որ աւետարանական պատմութիւնների բոլոր փաստերը արուեստական են, այն ժամանակ այլ ևս հարկ չէր լինիլ հերքելու, որ քրիստոնէութիւնը բողոքական աղբիւրներից կախում ունի: Մակայն մինչև այժմ այդպիսի մի բան չէ գտնուել, ուստի և մենք հաստատապէս հաւատում ենք, որ մեր աւետարանի մէջ հազորդած տեղեկութիւնները պատմական ճշմարտութիւն են: Այլ մեզ հետ համակարծիք չէ, նորան կարելի է ցոյց տալ ներքին մի քանի փաստեր, որոնք հաստատապէս կը խորատկեն նորա հայեացքը: Կրօնների համեմատական գիտութեան մէջ կայ մի օրէնք, որ ասում է. «Միայն այն ժամանակ խնդիրը պէտք է ժողովարարութեամբ մեկնել, երբ հեղինակի պատմած և նկարագրած դէպքերը միայն իւր ժամանակով գոհացուցիչ կերպով չեն բացատրւում»: Միթէ Յիսուսի աշակերտների նկարագրած ժամանակամիջոցում, եթէ կամենային, չէին կարող Յիսուսի թէ կեանքը և թէ նրա դարձերը անկախ կերպով հնարել: Միթէ այն ժամանակուայ հրէաները աւետարանում նկարագրած դէպքերը ստեղծագործելու համար օտար աղբիւրի կարիք ունէին: Եթէ նորա ցանկանային, օրինակի համար, հնարել Յիսուսի ծնունդը կոյսից և նորա անմեղութիւնը, ապա հրեշտակների երևան գալը և նոցա փառաբանութիւնը, նոքա բողոքական յիշատակարանների կարիքը չէին զգալ, այլ նոցա համար աղբիւր կարող էին ծառայել շին Աւստի մարգարէութիւնները: Ապա նոցա հասկացողութիւնը ժառանգական մեղքի մասին հետեւանք է այն բանին, որ Աստուծոյ Որդին մի բացա-

առաջին պիտի կազմէր, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ անմեղ Աստուծոյ Որդին պիտի աշխարհ գար Աստուծոյ անմիջական ցանկութեան համեմատ: Վերջապէս պիտի ինքնապիտի ունենանք աւետարանիչներ յայն հասարակ, անկողմնակալ դրութեան ձեւը, որը տարբեր է Լալիտա-Վեդիարայի միատեքստիկան կատարելագործութեան հասցրած երեւակայական ձեւից և բուդդայական բնագրից, ինչպէս երկինքը երկրից: Այս էլ ասենք, եթէ Յիսուսի աշակերտները թոյլ տային որեւէ հաւաքակալութիւն Քրիստոսի և Բուդդայի մէջ, կը գոյարանէին նորան հնգկացիներ յառաջ, հնարելով աւելի մեծ հրաշքներ, քան Բուդդան է գործել, և եթէ մենք նկատէինք աւետարաններ ի մէջ Քրիստոսի կեանքը մեծացրած բուդդայականի երեւակայութեամբ, այն ժամանակ մենք կարող ենք այս հարցը լուծուած համարել, թէպէտ և յոյս չունինք թէ դորա հետ կանհետանան նաև բուդդայականների գրական խճճանքը: Մեր Փրկիչը այնպիսի տռանձնայատուկ, արդար և միևնոյն ժամանակ մարդկայնօրէն անզուգական և անոգիւտ դէմք է, որ մեզ թուում է, թէ գիտական և թէ կրօնական տեսակէտից նորան Բուդդայի հետ համեմատելը անարգարութիւն է:

Ինքը Զէյդէլը խոտորվանում է. «Քրիստոնէութեան բովանդակութեան անսահման վսեմութեան զիտակցութիւնը շատ անգամ կարող է տիրել մեր սրտերին այնպիսի ոյժով, որ ահամայնց անարգ և անպիտան է թուում մեզ մտածել որ այնպիսի մի դարձ կարելի լինէր երեւակայութեամբ ստեղծել, հէնց որ մենք՝ աստուածային կատարելութեամբ տպաւորուած Քրիստոսի անձնաւորութեան հզօր վսեմութեան և համեստ բարձրութեան ենք զիպշու՞մ »¹⁾:

(Կր ԵԱՐՈՒՆԱԿՈՒԻ.)

1) Зейдель. Цит. соч. стр. 319.